ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1467-Ա « 18 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով՝

1. Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Երևանի Ա.Գաբրիելյանի անվան արվեստի դպրոց», Երևանի Ավան համայնքի «Գ.Բուդաղյանի անվան արվեստի դպրոց», «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Մ.Մալունցյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի «Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց», Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Ս. Բարխուդարյանի անվան թիվ 2 արվեստի դպրոց» և «Քանաքեռ-Զեյթուն համայնքի Մինաս Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հ.հ.1-22 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հետ համաձայնեցնելուց հետո,

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ